



“ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1903

ԹԻՒ 9

ԱՌՆԵՏՈՐ ՍՈՒՋՅԻ ԱՌՋԵՒ

Անգղիայէ Աւստրալիա գացող շահեհաւեր շատ անգամ 1,000 մարդ կը տանին, որոնց մէջ են նաւաստիները և նաւին պաշտօնեաները: Ասոնք շատ ծովերէ կ'անցնին և նշանաւոր փորձառութիւններ կ'ունենան օդին բարեխառնութեան փոփոխութիւններուն. վասն զի Հիւսիսային բարեխառնութենէն Հարաւայինը անցնելու ատեն կը պարտաւորին անցնիլ Այրեցած Գօտիէն. նաև ձմեռ է Աւստրալիոյ մէջ երբ ամառ է Անգղիոյ մէջ: Ծոգեհաւերը հիմա Միջերկրական ծովէն կ'երթան, վասն զի այդ ճամբան շատ մը կարճ է քան այն ճամբան որ Ափրիկէի հարաւային ծայրին բոլորափքէն կը դառնայ: Ասոնք անցնելու են Սուէզի Գրանցէն, որուն հարաւային ծայրն է Սուէզ քաղաքը: Պատկերը կը ներկայացնէ բնիկ նաւաւարները, որոնք առևտուր կ'ընեն ճամբորդներուն հետ: Կը բերեն բուստի կտորներ, նարինջ, խկարէթ, և բազմաթիւ ուրիշ բաներ: Ծոգեհաւը կարճ միջոց մը կը կենայ, և նաւաւարները անոր մօտենալու համար ըրած ճիգերնուն մէջ իրարու հետ բարձրաձայն կը վիճին:



ԱԼՊԵԱՆ ԶՈՒԻՑԵՐԱՅԻՆԵՐՈՒՆ «ԳԻՇԵՐ ԲԱՐԻ»Ն

Երբ արևը մարը կը մանէ հովտին մէջ, և լեռներուն ձիւնապատ գագաթները կը փայլին սպիկ լոյսերով, խաշնարածը (հովիւ) որ կը բնակի անոնց ամենաբարձր մէկ կէտին վրայ, կ'առնէ իր եղջերափողը և անով յտակ և բարձրաձայն կը գոչէ «Օրհնեցէք Տէրը»: Մօտակայ խաշնարածները երբ կը լսեն ձայնը, անմիջապէս դուրս կ'ելլեն իրենց խրճիթներէն, կ'առնեն իրենց Ալպեան եղջերափո-

ղերը, և կը կրկնեն նոյն բառերը: Ասիկա շատ անգամ կը տեսնուի քառորդ ժամ, և ձայնը արձագանգ կու տայ շրջակայ բոլոր լեռներէն և ցից ժայ-

ռերէն: Երբ նորէն լուծիւն կը տեսնուի, խաշնարածները ծոռնկի վրայ կու դան և կ'աղօթեն գլխաբաց: Երբ երեկոյն խաւարը կը յաջորդէ, «Գի-

չեր բարի" կ'աղաղակէ ամէնէն բարձր գտնուող խաշնարածը իր եղջերափուղով: Բառերը արձագանգ կու տան բոլոր լեռներէն, խաշնարածներուն եղջերափողերէն և ժայռերուն սրածայր գագաթներէն, և այ՛ն ատեն լեռնաբնակները իրենց բնակարանները կը քաշուին:


ԹՈՒՄԻ ԶԳՈՍՏԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Ասիկա հիմա կը թուի թէ բոլորովին կարելի է «աքուսթիք» կոչուած գործիքի մը միջոցաւ զոր հնարած է Մր. Հըջինսըն Նիւ Եորք քաղաքէն: Կ'օգտուին անկէ բոլոր խուլերը բայ ի անոնցմէ որոնց լսողական ջիղը անգամաւ ծուծ է: Կըթ ուի թէ գործիքն է բաղադրուած թիւն հեռաձայնի և մանրաձայնի, որոնց հետ կ'ընկերանան բերնի և ականջի գործիքներ և զըրպանի ելեկտրական զորաւոր բախոց մը: Արդ ինքը, որ գրեթէ անհաւատալի է, սապէս կը պատուի Սոյնիքի: Ատրիշի մէջ:

Քսանուերկու տարեկան մանկամարդկին մը, որ իր տեսողութիւնն ու լսողութիւնը կորսնցուցած էր վեց տարեկան հասակին մէջ, մեծ ակսորժով ունկնդրեց երաժշտական գործիքները և մարդկային ձայնի որոնք իրեն հաղորդուեցան առաջին անգամ իր հիւանդանալէն ետքը վերոյիշեալ նոր գործիքներուն միջոցաւ: Նիւ Եորքի խուլ համբերու Հաստատութեան մէջ ուսանող տղայ մը որ թէպէտ խուլ սորված էր խօսիլ ուրիշներուն շըրթունքները դիտելով, կրկնեց «հայրիկ», «մայրիկ» և «օ՛ն» բառերը, երբ լսեց զանոնք կազմածին միջոցաւ, և ինք ալ շատ սքանչացաւ: Կոյր, խուլ և համր ծնած աղջիկ մը սաստիկ ուրախութենէն ծափ զարկաւ երբ բուն իր «մայրիկ» արտասանելը լսեց, և ապա թեմէն ձեռքերը դաշնակահարը դադարեցաւ դարձել, վասն զի այլ ևս չսկեց ձայնել որոնք հիացուցած էին զինք: Ասոնց նման ուրիշ բաներ ալ կրնային պատուելի գրեթէ առանց ծայրին հասնելու, վասն զի գործիքները գործածած են հազարաւոր խուլ և մասամբ խուլ անձեր:

Հոս կան երկու պատկերներ միևնոյն պատանիին, և պիտի պատմենք ձեզի թէ ի՛նչ պատահած է անոր: Այդ պատանին անպատիւ և արբեցող ծնողներու զաւակ ըլլալու դժբաղդու թիւնն ունեցաւ: Բան մը չէր գիտեր մօր մը համբոյրին, հօր մը սիրալիր խնամքին, նաև հանգստաւէտ տան մը վրայ, ուր բաւական ուտելիք գտնէր և պահուէր վտանգէ: Երբ տակաւին շատ պղտիկ էր, հայրը ստիպեց զանկա վտողներուն մէջ մտնել: Եւ ձմեռ օր մը մարդասէր տիկին մը տեսնելով անոր պատուած և բարակ հանդերձները, իր տունը կանչեց զանկա և ձեռք մը տաքցնող

րի զգաստարան—դպրոցի մը մէջ անցընել, և թոմիի համար աղէկ եղաւ որ ձերբակալուեցաւ տակաւին շատ պղտիկ եղած ատենը երբ դեռ շատ յառաջ դացած չէր ոճրագործութեան ճամբուն մէջ: Լուսցին զանկա և տուին անոր ձեռք մը աղուոր հանդերձ: Երկրորդ պատկերին մէջ կը տեսնէք զանկա զգաստարան—դպրոցի վերատեսուչին հետ որ անոր ձեռքէն բռնած է: Ասիկա է դպրոց մը գեռահաս յանցաւորներու համար, որոնք տուն տեղ չունին կամ յարմար տուն չունին: Այդ տեղ կը զրկուին կրթուելու և խաղի յատկացուած ժամերու մէջ խաղալու համար, և կը սորվին արհեստ մը, որուն միջոցաւ օգտակար և պատուաւոր քաղաքացիներ ըլլան երբ մեծնան: Թոմի առաջին անգամուն չուգեց, վասն զի սովորած էր փողոցներու ազատ կեանքին, և իրեն զըրելի կու գային դպրոցին և դորձանոցին մէջ անցուած ժամերը: Բայց աղուոր բան է առատ առողջարար կերակուր ուտել, և քիչ մը բարի յատկութիւններ կը գըտնուէին թոմիի բնութեան մէջ, որ մարդասէր վերակացուններուն խնամքով վերջապէս երևան եկաւ: Ասկէ զատ, տղոց բնութիւնը չէ միշտ տխուր և խոժոռ ըլլալ, և թոմի սորվեցաւ ընդունիլ իր դիրքը: Երաժշտութեան ճաշակ ունէր, ուստի անդամ եղաւ նուագախումբի մը որմէ մեծ հաճոյք կը զգար: Շատ խաղեր և զբօսանքներ կը վայելէր ուրիշ տղոց հետ, և չուտով հասկցաւ թէ իր դաստիարակներն ու խնամակալները իր ճշմարիտ բարեկամներն են: Եւ այսպէս այս տղան որ հանրութեան անէժք մը ըլլալու ընթացքի մէջ կը գտնուէր, հիմա կը խոստանայ արժանիքի տէր և յարգելի մարդ մը ըլլալ:



Զոմիին Ներգետի ՄԱՐԻԿ

Մարդ ի՛նչ կը զգայ սուղելու զգեստով երբ կը քայլէ ծովուն յատակին վրայ: Ճիշդ ինչ որ կը զգայ ուրիշ տեղեր քաղաք ժամանակը, կ'ըսէ փորձառու սուղակը: Բայց կը թուի

հանդերձ հազցուց անոր, բայց հայրը ստիպեց տղան որ հանէ այն նոր հանդերձները և նորէն ցնցոտիները հագնի, վասն զի, ըսաւ, մէկը բան մը պիտի չտայ մուրացկան տղու մը որ այսպէս աղուոր հագուած է: Ուստի թոմիի նոր հանդերձը ծախուեցաւ: Հօրը օղի գնելու համար: Զարմանալի չէ որ թոմիի կանուխէն սորվեցաւ գողութիւն ընել, վասն զի ո՛վ սորվեցուցած էր անոր աւելի աղէկ բան մը ընել: Անոր միակ հոգն էր գողութեան գործին մէջ չբռնուել, և անգամ մը կարող չեղաւ յաջողիլ ասոր մէջ: Ուստի կանութեան պաշտօնեայ մը տեսաւ զանկա և ձերբակալեց անոր փախչելու կարող ըլլալէն առաջ: Հոս, առաջին պատկերին մէջ, կը տեսնէք թոմիին ուստիկանութեան պաշտօնեային հետ, և կը հասկնաք թէ Լոնտոնի ոստիկանութեան պաշտօնեաները ի՛նչ զգեստ կը հագնին: Թոմի դատապարտուեցաւ հինգ տա-

գասէր վերակացուններուն խնամքով վերջապէս երևան եկաւ: Ասկէ զատ, տղոց բնութիւնը չէ միշտ տխուր և խոժոռ ըլլալ, և թոմի սորվեցաւ ընդունիլ իր դիրքը: Երաժշտութեան ճաշակ ունէր, ուստի անդամ եղաւ նուագախումբի մը որմէ մեծ հաճոյք կը զգար: Շատ խաղեր և զբօսանքներ կը վայելէր ուրիշ տղոց հետ, և չուտով հասկցաւ թէ իր դաստիարակներն ու խնամակալները իր ճշմարիտ բարեկամներն են: Եւ այսպէս այս տղան որ հանրութեան անէժք մը ըլլալու ընթացքի մէջ կը գտնուէր, հիմա կը խոստանայ արժանիքի տէր և յարգելի մարդ մը ըլլալ:

Զոմիին Ներգետի ՄԱՐԻԿ


Մարդ ի՛նչ կը զգայ սուղելու զգեստով երբ կը քայլէ ծովուն յատակին վրայ: Ճիշդ ինչ որ կը զգայ ուրիշ տեղեր քաղաք ժամանակը, կ'ըսէ փորձառու սուղակը: Բայց կը թուի

Թէ բանը տարբեր է նոր սկսողին համար: Գլխուն մէջ թեթեւ ցաւ մը կը զգացուի և ականջներուն մէջ ձայներ երբ մարդ վար կ'իջնէ դէպ ի յատակը, և պատճառն է մթնոլորտին ճնշումը, բայց անոնք շուտ կը դադարին նեղելէ: Այնուհետև կայ մէզը. վասն զի մինչև անգամ յատակի շուրին մէջ սուղակը իբր քառասուն կամ յիսուն ոտք հեռուն միայն կրնայ տեսնել, և ուր որ շուրը տղմուտ է, այս հեռաւորութիւնը մինչև տասնի կ'իջնայ և ժամանակ կ'ըլլայ որ մութի մէջ եղածի պէս խորխորակու կը ստիպուի մարդ: Բայց ամէնէն զարմանալին է մարմնի թեթեւութիւնը: Սուգակը, հակառակ իր երկաթէ կոշիկներուն և կապարէ գոտիին, պղնձէ սաղաւարտին և լանջանոցին և բուն իսկ իր մարմնին ծանրութեանը, վեր վար կ'ելլէ կ'իջնայ: Կրնայ բաներ վերցնել, բայց չկրնար վար քաշել, վասն զի այսպէս ընելով պարզապէս ինքզինք կը վերցնէ: Կըրնայ մուրճով դարնել և սղոցել ատաղձը. բայց եթէ ինք չուանով անոր կապուած չըլլայ, փոխանակ գամ մը խոթելու, ինքզինք ետ կը մղէ ամէն անգամ որ հարուածը կու տայ, և պէտք է որ ատաղձը բռնէ մէկ ձեռքովը և սղոցէ միւսովը: Չկրնար քաշել մակընթացութեան դէմ, այլ պէտք է շուրը մտնէ այնպիսի տեղէ մը որ հոսանքը մղէ զինք դէպ ի նպատակը: Եւ սակայն բոլոր այս սահմանադրութիւններով իսկ սուգակը աղուոր գործ կրնայ կատարել շուրին ներքև ունեցած իր ժամանակին մէջ, և կրնայ շուրին ներքև վերցնել և շարժել առարկաներ գործնք չէր կրնար շարժել ցամաքին վրայ: Անոր մեծագոյն վերտանգը կու գոյ մարդոց անհողութենէն կամ բուն իսկ իր արկածներէն:

ՍՐԻ ԶԱՆ ՓԷՆՏՐԻ

Թերևս մեր ընթերցողներէն ոմանք տեսած են հեռագրական պարան մը որ կը դուրի Ուիլիամսոսի և ծովերուն յատակը: Անիկա գլանի ձև ունի և մարդու մատէն քիչ մը թանձր է: Կեդրոնը պղնձէ բարակ թիւ մը կայ գրութե կապարեայ գրչի կապարին թանձրութեամբ: Ասոր մէջէն է որ լուրը կը ճամբորդէ, և բոլոր միւս մասերը ասիկա պաշտպանելու համար են: Այս թիւը կը պատէ կուլթի փէրքա կոչուած ձգախիւր որ հասարակ ձգախիւր կը նմանի, երկարականութիւն չհաղորդեր, և չմողուր որ լուրը փակու-

չի կեդրոնի թեթէն: Այնուհետև ասոր բոլորտիքը կան քթան և քանի մը խաւ ժապաւէն, յետոյ ամէնը մէկէն կը պատէ ոլորուած թեթերէ պատեան մը: Ուիլիամսոսի առաջին պարանը շինեց Ամերիկացի մը Սայրըս Ու. Ֆիլտս: Բայց այս գիւտը պէտք ունէր աւելի զարգանալու որպէս զի աւելի գործնական ըլլար: Այդ զարգացումները կամաց կամաց եկան, և հիմա ամէն տարի նոր պարաններ կը դուրին: Արդէն շատեր գրուած են Ատլանտեան Ուիլիամսոսի մէկ եզրէն միւսը, և հիմա երկու հատ գրուած է աւելի լայն եղող Խաղաղականին մէջ: Այս զարգացումներուն և պարանները դնելուն մէջ ամէնէն աւելի դեր կատարողներէն և ազգեցութիւն ունեցողներէն



մէկն է Անգլիացի մը Սըր ճան Փէնտրը: Չկայ երկիր մը որ հեռագրական պարանի աւելի պէտք ունենայ քան Անգլիա: Բրիտանական պետութիւնը մասեր ունի աշխարհիս ամէն կողմերը, և հիմա Լոնտոնի մէջ կարելի է լուրեր առնել հեռագրական պարանի միջոցաւ պետութեան գրութե ամէն մասէն: Ինչ որ պատահի Հնդկաստան, Աւստրալիա, Նոր Զելանդիա կամ Հարաւային Աֆրիկէ, նոյն օրը կրնայ գիտնալ Բրիտանական կառավարութիւնը: 1900ին 64,000 մղոն հեռագրական պարան կար որ կը կապակցէին Անգլիան իր գաղութներուն հետ, կամ այնքան որ բաւական է երկրագունդս Հասարակածին վրայ շրջապատել երկուք ու կէս անգամ:

ձԱՆ ԹՆՐՈՒՄՈՒՆԻ ԽՆԱՄԱԿԱԼԸ
 «Հաճեցէք տէր իմ, ինձի քառորդ մը փոխ տալ», ըսաւ ցնցոտիներ հաճած պզտիկ տղայ մը անցնող դար-

ձող խել մը մարդոց ձմեռ դիչեր մը փողոցի լամբարներու լոյսին ներքև: Մարդոց մէկ քանին շարժեցին իրենց գլուխները, մէկ քանին անցան առանց ուշադրութիւն տալու տղին խնդիրքին: Վերջը երկու մարդիկ որ կը պտրտէին մէկտեղ, կայնեցան: «Ինչո՞ւ փոխ կը խնդրես քառորդ մը», հարցուց անոնցմէ մէկը տղին: «Վասն զի նորէն քեզի պիտի դարձընեմ գանձիկ», պատասխանեց տղան շուտ մը: «Իս չեմ մուրար», Հարցումն ընող մարդը խնդաց ակամայ. «Հա, հա, ահա կրթեալ մէկը», ըսաւ հեգնական շեշտով մը իր բարեկամին: Եւ տղին դառնալով շարունակեց խօսքը. «Հոս նայէ, պզտիկ, ես ստակ փոխ կու տամ հաստատուն երաշխաւորով: Ի՞նչ երաշխաւոր կըրնաս տալ ինձի»: «Երաշխաւոր», ըսաւ տղան վճատած: Այն ատեն անոր երկու անձկոտ աչքերը պայծառացան, երբ հասկցաւ բառին նշանակութիւնը, և աւելցուց, «Ես ուրիշ երաշխաւոր չեմ կրնար տալ, բայց միայն իմ խօսքս, և աշխատելու յօժարութիւնս»: Մարդը մեծ քահաճ հով խնդաց: «Լաւ, ահա վաստիկ ցար ստակդ, պզտիկ պատրաստախօս», ըսաւ երբ քառորդ մը նետեց տղին, և փողոցն ի վեր ելաւ իր բարեկամին հետ: «Ներեցէք, տէր, ինձի չըսիք ձեր անունը, ոչ ալ թէ ուր կը բնակիք», ըսաւ տղան մարդուն ետևէն վազելով: «Մեր գործը չլինցա՞ւ տակաւին», ըսաւ մարդը խստութեամբ, երբ նորէն կայնեցաւ: «Ի՞նչ ուրիշ մուրացկաններու օգտին համար կ'ուզես գիտնալ իմ տեղս», «Ոյ, տէր», պատասխանեց պզտիկը լրջութեամբ: «Ձեր օգտին համար»: Ասոր վրայ երկու մարդիկն ալ խնդացին: «Լաւ, իմ անունն է ճան Թերթըթըն, և կը բնակիմ թիւ 16, Ֆէյրֆիլդ Ալբերթ», ըսաւ քառորդը տուողը:

Մը Թերթըթընի տունը մեծ էր և գեղեցիկ, և լեցուն էր գեղարուեստական կահերով և գործերով: Ան շատ հարուստ էր, բայց երբեք առատաձեռն չէր եղած: Այս անգամ ստակ տուած էր իբրև քահաճոյք մը: Տղին հարցնելու կերպը հաճելի եկած էր անոր: Քիչ անգամ կը պատահէր որ ողորմութեան համար քառորդ մը տար: Նոյն ատեն փոքրիկ Պէրնըրտ Ուէլզ այն քառորդով գնեց հաց մը, կտորիկ մը միս և պզտիկ թուղթ մը թէյ, և զանոնք տուն տարաւ: Անոնց տունն էր պզտիկ սենեակ մը աղքատներու յատուկ խեղճ բնակարանի մը

մէջ: Թովմի հայրը մեռած էր և մայրը ապրուստը կը հանէր չապիկներ կարելով: Բայց այդ շարժումն հիւանդացած էր և չէր կրնար գործել, ստակն ալ բոլորովին հատած էր: «Ոհ, Պէրնըրտ, ուրկէ՞ ստացար այս բաները», հարցուց մայրը, երբ տղան ներս մտաւ: Պէրնըրտ պատմեց ինչ որ պատահած էր: «Մենք պէտք է որ այդ ստակը մարդուն վերադարձնենք որչափ կարելի է շուտ»:» Ըսաւ մայրը: Բայց տիկին Ուէյլս կարող չէր նորէն իր գործին սկսիլ: Պէրնըրտ քիչ մը ստակ կը շահէր հիմա լրագիր ծախելով, բայց ասիկա պէտք էր ուսելիք և ածուխ գնելու: Վերջապէս տիկին Ուէյլս մեռաւ, և Պէրնըրտի հօրեղբայրը որ ալքաս գործաւոր և սաստիկ աշխատող մարդ մըն էր, եկաւ և պղտիկ տղան իր տունն առաւ: Պէրնըրտ կ'աշխատէր իր հօրեղբոր հայուին, անոր խանութին մէջ: Բայց տղին ստակ չէր տրուուեր: Օր մը Պէրնըրտ քառորդ մը ուզեց հօրեղբորմէն որպէս զի կարող ըլլար վճարել Մր. Թհրոթթընէ առած ստակը, բայց հօրեղբայրը վրան խնդաց, «Ճան Թհրոթթըն արդէն շատ ստակ ունի», ըսաւ մարդը, «անիկա քաղաքին ամէնէն հարուստը նաև ամէնէն նուաստը և գծուծն է: Կարծեմ պէտք չէ որ իմ քառորդներէս ունէ մէկը տամ անոր»:»

Տարի մը անցաւ: Պէրնըրտ չմոռցաւ իր պարտքը Մր. Թհրոթթընի: Շատ բաներ խորհեցաւ որպէս զի կարենար իր խօսքը կատարել: Օր մը երբ բաղամախալ փողոցէ մը կ'անցնէր, գտաւ ակնոց մը զոր կորանցուցած էր տիկին մը: Տիկինը մէկ քառորդ վարձ տուաւ անոր: Պէրնըրտ անմիջապէս վաղեց թիւ 16, Ֆէյրփիւ Սթրիւ: «Հիմա մայրս ի՞նչպէս ուրախ կ'ըլլայ, կը յուսամ թէ զիտէ», կը մտածէր ինքնիրեն, մինչ կը վաղէր թեթև և ստոստուն քայլերով: Բայց իր սիրտը աւելի արագ էր քան քայլերը: Գրեթէ երեկուն եղած էր, և Մր. Թհրոթթըն ետ դարձած էր իր սեղանաւորական գրասենեակէն ու իր գրատան մէջ կը գտնուէր: Մասնաւոր դրաղում մը չունէր, և ըսաւ սպասուորին որ տղան ներս առաջնորդէ: «Կս ձեր քառորդը վճարելու եկայ, Մր. Թհրոթթըն», ըսաւ Պէրնըրտ յառաջ քալելով չքեղ սենեակէն ներս, և ստակը ձեռքը բռնած: Շատ չնորհակալ եմ որ ինծի վստահեցաք, ներեցէք, չկրցի շահիլ ասիկա աւելի կանուխ:» Մր. Թհրոթթըն Պէրնըրտի նայեցաւ հե-

տազօտիչ նայուածքով մը: «Սխալած ես, տղայ», ըսաւ, «միտքս չգար որ քեզի փոխ տուած ըլլամ քառորդ մը, ոչ ալ քեզ կը ճանչնամ»:» «Չէք յիշեր, տէր, փողոցին վրայ գիշեր մը», ըսաւ Պէրնըրտ: «Ո, հօ, այո, ես հիմա կը յիշեմ քեզ, լաւ, լաւ, լաւ:» Մր. Թհրոթթըն նորէն խնդաց, երբ աւելի յստակ կերպով մտքին առջև կու գար դէպքը քանի որ կը խորհէր: «Ուրեմն դուն այն փոքրիկ տղան ես որ չէր ուզեր մուրալ:» «Այո, տէր, ան եմ», ըսաւ Պէրնըրտ, և արծաթ քառորդը դրաւ սեղանին վրայ Մր. Թհրոթթընի ձեռքին քով: Սեղանաւորը հետաքրքրուեցաւ: «Շատ լաւ, փոքրիկ բարեկամ», ըսաւ, «կը խոստովանիմ որ անակնկալ մը ըրիք ինձի:» Իր բազկաթոռին կոթնած գննեց տղան մանրամասնօրէն, մինչ իր բաճկոնին զրպանը սահեցուց քառորդը: Մր. Թհրոթթըն ուզեց քննել շարժառիթը տղին այս ընթացքին որ իրեն տարօրինակ երեցաւ: Ուղղակի ստպէս խօսեցաւ. «Հիմա, պղտիկ, թէ պէտ միտք չունենաս ալ ինձի ըսել, շատ կ'ուզեմ հասկնալ թէ ինչու կը վերադարձնես այս ստակը: Հասկցա՞ր այն ատեն թէ ես երբեք չէի ակնկալուր ստակը և կամ քեզ նորէն տեսնել:» «Շնորհակալ եմ, տէր, բայց ասիկա տարբերութիւն չընէր», ըսաւ Պէրնըրտ: «Այո, կը հասկնամ», ըսաւ Մր. Թհրոթթըն, «կ'ուզես որ զգայնես թէ համեստ տղայ մըն ես, և ասիկա աղէկ բան է: Այնպէ՞ս է:» «Ոյ, տէր, չեմ կարծեր թէ այդպէս է», պատասխանեց փոքրիկ Պէրնըրտ լրջօրէն, հարցնողին աչքին մէջ նայելով: «Եթէ ձեր ստակը ձեզի չվերադարձնէի, պիտի խորհէիք թէ խաբած էի ձեզ, եւ ըսնէք թէ ուրիշ մէկն ալ ձեզմէ բան մը ուզեր, անանկ մէկը որ ճշմարտապէս համեստ և ուղղամիտ է և կարօտ, և դուք զիս և այն նուաստ խաղը զոր ձեզի խաղացի ձեր միտքը բերելով 'Ոյ' պիտի ըսէիք անոր, և ես պատճառ ու պատասխանատու պիտի ըլլայի ատոր համար: Պատճառ պիտի ըլլայի նաև ձեր կծծի, կասկածոտ և անզգայ ըլլալուն, այնպէս չէ:»

Մր. Թհրոթթըն չժպտեցաւ այս անգամ: Անոր սիրտը և գոհ երևոյթ առնող դէմքը կարծեցաւ երբ նայեցաւ իր առջև գտնուող այդ փոքրիկին վրայ: Թերևս հիմա աւելի զարմացաւ քան զոր երբեք զարմացած էր իր բոլոր կեանքին մէջ: Սիրտը շարժեցաւ: Սա գաղափարը թէ այդ անուս փոքրիկ հասարակ փողոցի տղան

ինքզինք պատասխանատու կը նկատէր ճան Թհրոթթընի արարքներուն, շատ կը զարմայնէր զինք: Մարդը զգաց թէ իր անզգայ բնութիւնը դնաց, և անոր տեղ եկաւ փափաք մը բարիք և արժանաւոր գործեր ընել իր ստակով: Մտածեց թէ ի՞նչ աւելի աղէկ բան կրնար ընել քան խնամել այդ տղան որ միջոց եղաւ պատուելու իր անձնասիրութենէն: Մր. Թհրոթթընի ծանօթները ապշեցան մնացին երբ հասկցան թէ այն փայլուն երեսով փոքրիկ տղան զոր յաճախ Մր. Թհրոթթընի հետ կը տեսնէին, որբ մըն էր զոր այն հարուստը որդեգրած էր: Բարեկամ մը անոր ըսաւ անգամ մը. «Մր. Թհրոթթըն, կը զարմանամ որ չէք վախնար տղի մը խնամակալ ըլլալու պատասխանատուութիւնն ստանձնելէ:» «Նախ այս իմ պղտիկ տղաս ինք եղաւ ինձի խնամակալ», պատասխանեց Մր. Թհրոթթըն ժպտելով:

ՅՈՒԼԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| | Լ | Ե | Ն |
| Մ | Ռ | Պ | Պ |
| Ե | Պ | Ս | Ս |
| Գ | Մ | Ր | Ե |
| Բ | Ա | Ն | Մ |
| | Ս | Ս | |

Լուծեցին, Կ. Պոլս. (Գերման. որբանոց և Պէպլեք) — Թագուհի Գրեգորեան, Ովաննա Կ. Մովսէսեան, Սուլթան Կոչոսեան, Նուրիճա Գարթամեան: Նիկոպոլս. — Ջրանո խոհեակներն: Ա. Պոլս. — Ստեփան Ռ. Բերեթեճեան: Անտիոք. — Վարդան Վարդերեսեան, Մանասէ Ճառնեան: Գոլտոթ. — Յովսէփնէն: Օտանս: Սարգիս. — Լուստը Գ. Տէր Միքայէլեան, Սաչատուր Յ. Անտոնեան, Թուա. — Գրեգոր Կ. Պոշչէկեան, Բարսեղ Տէր Բարսեղեան: Մ. Արշ. — Նշան Շմաւոնեան, Տոնայեան խաչատուրեան, Պաղտատար Կարապետեան, Արտաշէս Մեծասուրեան, Յակոբ Գասպարեան, Սարայէլ Տէր Յովսէփնէսեան, Գարեգին Արիստակէսեան, Ներսէս Արիստակէսեան: (Արշակ) — Աւետիս Շուշանեան:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ՍՈՒՐԻ ԳԻՐԲԵՆ

| | | | |
|---|---|---|---|
| . | . | 0 | . |
| . | 0 | . | 0 |
| 0 | . | . | 0 |
| . | 0 | . | 0 |
| . | . | 0 | . |

1. Նշանաւոր լեռ մը: 2. Իորայէի Թագաւորներէն մին: 3. Մայրաքաղաք մը զոր Յովա պաշարեց: 4. Գամասիոսի զետերէն մին (աջէն ձախ): 5. Չայնարկութիւն մը: Յիշեալ անունները ըստ օրինակին իրարու տակ շարելէ ետքը դրոններուն տեղը գրաւող գերերը գագաթնէն ձախ իջնելով և շարունակելով կը կարգացուին Պողոսի գործակիցներէն մէկուն անունը:

Թալաա ԲԱՐՅԵՂ ՏԵՐ ԲԱՐՅԵՂՅԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դրահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղուղի համար:

Ամերիկայի Մեքսիկոնայի Ընկերութեան կողմէն Արտօնատեր Ճ. Բ. Կրիտ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆՈՒՄ

ԿՈՏԱՆԳՆՈՒՊՈՒԼԻԹ
Ի ՏՊԱՐԱՆՈՒ Ա. ՅԱՅՐ ՊՅԱՆՆԱՆ
Ֆրանսիացի Եղբայրացի Ամերիկայի խումբ